

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանի շնորհավորանքի խոսքը Երեխաների պաշտպանության օրվա առթիվ

01.06.2018

Հարգելի հայրենակիցներ

Երեխաներն են մեր կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը, երկրի ապագան կերտող սերունդը, մարդկային բարօրության համար նոր ճանապարհներ բացող անգնահատելի ուժը: Եվ այս հիշարժան օրը պարտավորեցնում է չափահաս բոլոր քաղաքացիներին՝ լինել նվիրական ու հոգատար խնամողն ու դաստիարակը մեր սիրասուն երեխաների, որպեսզի նրանք իրենց երջանիկ ու պաշտպանված զգան , վայելեն ընտանիքի և շրջապատի սերն ու ջերմությունը:

Շնորհավորում եմ բոլորիս Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, մաղթում մեր երեխաներին խաղաղ հայրենիք, անհոգ մանկություն, առողջ ու երջանիկ կյանք, պայծառ գալիք:

Ջերմ մաղթանքներով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյան